

գրքատան՝ առ չբաւելոյ այլում տեղոյ. և կան այժմ խաղաղ և միաբան:... Հ. Ղազարոսն գնաց ի կեռլէ. և ս առաւել յանկեցան ժողովուրդքն, և ետուն զեկեղեցին մեզ: Յայսմ ամի եղև ի կոստանդնուպօլիս ժանտամահ անհնարին, մինչև կոտորիլ չորիբ մասին մեծի քաղաքին... Հ. Չարարիայն վասն ժանտախտին բռնութեան՝ փախուցեալ էր ընդ մերոյ ժողովրդեան ի ծայրս կրճից սեաւ ձովուն՝ ի մայիս ամսոյ մինչև ցնոյեմբեր...: Յովհանէս վարդապետն է գափէլան հայոց եկեղեցւոյն [վենետոյ], այլ զի կայ յանկողնի հիւանդոտ, վասն այնորիկ զգործ նորա կատարէ Հ. Պօղոսն:...

Յամի Տեառն 1752

Յունվարի 15

[վենետիկ]

Նուաստ ծառայ

Ստեփաննոս վարդապետ Աբբայհայր

ՃԾԸ.

Մեծ շահեկանութիւն մ'ունի Հ. Իգնատիոս Խաչատուրեանի նամակը:

Վիեննայի Հայութիւնը կը յաջողի իր ջանիւք հովիւ ունենալ Մխիթարեան վարդապետ մը Ս. Ղազարու Միաբանութենէն: Այս դէպքը տեղի կ'ունենայ 1752 թուականին, ներկայ Վիեննական Հարց Միաբանութեան Ս. Ղազարէ բաժանումէն 21 տարի առաջ:

Սոյն թղթով Հ. Իգնատիոս վարդապետ ամփոփ տեղեկութիւն մը կու տայ իր առաքելութեան առաջին քայլերուն մասին առ Մելգոնեան Աբբահայր. շատ աւելի հետաքրքրական կը դառնայ այդ գործունէութեան պատմութիւնը՝ ուրիշ մէկ անտիպ նամակին հետեւեալ ծանօթութիւններով.

« Եւ ևս աստ օգնութեամբ աղօթից ձերոց և շնորհօք տեսան ի վայելչագեղ « մատտան, որ է ի կողմն մի հրապարակի սրբոյն ստեփաննոսի, յամենայն կիրա- « կամուտ երեկոյի, և ի կիրակէի առաւօտս, և յաւուրս տօնից փառաւորապէս « կատարեմք զպաշտօնն աստուածային. և յետ առաւօտեան ժամուն զմի՛ ժամ քա- « ըրող տամ, և ապա ասեմք զթիւ պատարագ: Եւ զան յեկեղեցին մեր ամենայն « հայք, և բազում զերմանացիք. և կառք կայսերն, յորժամ ի սուրբն ստեփաննոս « գայ կայսրն, առաջի մատտան մերոյ զկայ առնուն: Եւ զմայլեալ են յոյժ բազումք « յերգս և յարարողութիւնս մեր, և գովեն և առնեն մեծարանս մեզ ստուգապէս, « և ոչ վասն քաղաքավարութեան» (Հ. Իգնատիոս Վրդ. Խաչատուրեան առ Մել- « գոնեան Աբբահայր, յամին 1752 Ապրիլի 15 ի Վիեննա):

Դիտելի է, որ Հ. Իգնատիոս Վիեննայի մէջ ձեռք կը զարնէ առաքելութեան « ի խնդրոյ ժողովրդեան ստիպեալ », և այդ հայութիւնը ուղղակի իր կողմանէ մինչև անգամ ջանադիր կ'ըլլայ որ Մխիթարայ Ուխտը հոն ունենայ ուրիշ մենաստան մը ևս: Ահա այս մասին ինչպէս կը գրէ Մելգոնեան առ Հ. Գէորգ.

« Հայք Վենացիք և մանաւանդ անտօն աղայն և խօճասար աղայն որդեգիրք « միաբանութեան մերոյ իբրև տեսին զսա [զՀայր Իգնատիոս վարդապետ], « գրեթէ բռնի հրամանաւ սուրբ ժողովոյն սեպհականեցին զնա իրեանց միսսոնար, « մատուցեալ առ թագուհին մեծ՝ զմուրհակ աղաչանաց՝ տալ նոցա զտեղի ինչ մեծ « և բարեխառն, շինել զնա մեզ մենաստան, և դեռ չեղև պատասխանի. թէպէտ « պնդեն ոմանք թէ խնդիրն յաջող է..» (Գր. յամին 1752 Յունուար 15):

Հետաքրքրական է մեզ գիտնալ, թէ արդեօք ինքն իսկ Մխիթար, Ս. Ղազարէն զատ, այլուր ևս մենաստան կանգնելու ո՛ր և է ծրագիր մ'ունեցած կամ հաղորդած է:

Առ այս, անտարակոյս, պէտք է ապաւինիլ պատմական որոշ փաստերու, առանց որոց անգոր կը մնայ ամէն կարծիք: